

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈՒԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ «ՀՖՖ») Բողոքարկման կոմիտեի նիստը կայացել է քաղաք Երևանում 2021թվ. մարտի 12-ին ժամը 18.30-ից մինչև 21.00, իսկ արձանագրությունը կազմվել է 2021թվ. մարտի 17-ին:

Բողոքարկման Կոմիտեի նիստի կայացման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, ՀՖՖ գրասենյակ, Խանջյան 27:

Բողոքարկման Կոմիտեի նիստի անցկացման կարգը՝ բաց, բողոքաբեր անձանց ներկայացուցիչների մասնակցությամբ:

Բողոքարկման Կոմիտեի նիստին մասնակցել են կոմիտեի 5 անդամներից 4-ը՝ Դավիթ Սարգսյանը, Զոհրապ Եզանյանը, Արամ Արոյանը և Կարեն Ասատուրյանը:

Բողոքարկման Կոմիտեի նիստն անցկացնելու համար պահանջվող քվորումն ապահովված էր:

Բողոքարկման Կոմիտեի նիստը վարում էր ՀՖՖ Բողոքարկման կոմիտեի անդամ Դավիթ Սարգսյանը՝ նախագահ Արմեն Դավթյանի բացակայությամբ պայմանավորված:

Բողոքարկման Կոմիտեի նիստը ձայնագրվում էր:

Բողոքարկման Կոմիտեի նիստին ներկա էին բողոքաբեր անձանց ներկայացուցիչները, ինչպես նաև ՀՖՖ իրավաբան Օլգա Գրիգորյանը՝ արձանագրման նպատակով:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

1. Նիստի բացում, նախագահի ներածական խոսք
2. Լոռի ֆուտբոլային ակումբի բողոքի քննարկում /Ուրարտուի հանդիպման հետ կապված/
3. Լոռի ֆուտբոլային ակումբի բողոքի քննարկում /Ալաշկերտի հանդիպման հետ կապված/
4. Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբի բողոքի քննարկում
5. Շիրակ-2 ֆուտբոլային ակումբի բողոքի քննարկում /Սևանի հանդիպման հետ կապված
6. Բողոքարկման Կոմիտեի նիստի ամփոփում

Բողոքարկման Կոմիտեի նիստի անցկացման ընթացակարգի վերաբերյալ առաջարկությամբ հանդես եկավ Բողոքարկման Կոմիտեի անդամ Դավիթ Սարգսյանն ու առաջարկեց Բողոքարկման Կոմիտեին նիստն անցկացնել բաց ընթացակարգով,

Թեև ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 9-րդ հոդվածը նախատեսում է Բողոքարկման Կոմիտեի նիստի անցկացման փակ ընթացակարգ /տե՛ս Հոդված 9.01/:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 1

Օրակարգի 1-ին հարցով հանդես եկավ Կոմիտեի անդամ Դավիթ Սարգսյանը: Բացման խոսքում Դավիթ Սարգսյանի բողոքաբեր թիմերի ներկայացուցիչների մասնակցությամբ /նիստի բացմանը չմասնակցեց Շիրակ-2 ֆուտբոլային ակումբի ներկայացուցիչը՝ ուշացման պատճառով/ նշեց հետևյալը.

1. Բողոքարկման Կոմիտեն ներողամտություն է հայցում նիստի ուշ հրավիրման կապակցությամբ, ինչը պայմանավորված է եղել ինչպես համաճարակային և պատերազմական իրավիճակով, այնպես էլ համապատասխան հստակ կարգավորումների բացակայությամբ:
2. Բողոքարկման Կոմիտեի ընթացակարգը՝ պայմանավորված ՀՖՖ անդամների ընդհանուր ժողովի կողմից ՀՖՖ կանոնադրության վերաբերյալ հարցի հետաձգմամբ այդպես էլ չընդունվեց:
3. Բողոքարկման Կոմիտեի անդամի թափուր տեղը լրացվեց ՀՖՖ վերջին ընդհանուր ժողովի ընթացքում միայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 28-ին:

Բողոքարկման Կոմիտեի անդամները համաձայնեցին, որ այսուհետ պիտի ավելի հետամուտ լինեն ժամկետների պահպանմանն ու նիստերի հրավիրմանը:

Բողոքարկման Կոմիտեն հստակ ընդգծեց, որ անկախ Բողոքարկման Կոմիտեի նկատմամբ կիրառվող պահանջների՝ առավել կարևոր է բաց և թափանցիկ քննարկումը՝ համապատասխան բողոքաբեր անձանց մասնակցությամբ, և այս մոտեցումը պետք է շարունակաբար կիրառվի:

ՈՐՈՇՈՒՄ 1

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ որևէ որոշում չկայացվեց, քանի որ այն կրում էր ընթացակարգային բնույթ:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 2

Օրակարգի 2-րդ հարցով իրենց դիրքորոշումը ներկայացրեցին Լոռի ֆուտբոլային ակումբի ներկայացուցիչները: Ընդ որում, իրենց խնդրանքով Բողոքարկման Կոմիտեն համաձայնեց թույլատրել իրենց վերաբերող հարցերի քննարկման ձայնագրում /օրակարգի 2-րդ և 3-րդ հարցեր/՝ պայմանով, որ նշված ձայնագրությունը չի կարող հրապարակվել կամ այլ կերպ հանրայնացվել:

Ըստ Լոռի ֆուտբոլային ակումբի՝ Ուրարտու ֆուտբոլային ակումբի հետ 2020 թվականի օգոստոսի 17-ի ՀՀ Պրեմիեր Լիգայի առաջին տուրի հանդիպումը ենթակա

Էր հետաձգման հաշվի առնելով, որ Լոռի ֆուտբոլային ակումբում համաճարակային իրավիճակով պայմանավորված հնարավոր չի եղել ժամանակին համալրել թիմը, իսկ մինչև ՀՀ Պրեմիեր Լիգայի մեկնարկը թիմ ժամանած ֆուտբոլիստները գտնվել են կարանտինի մեջ՝ համաճայն ՀՀ օրենսդրության պահանջների: Ավելին.

1) Հանդիպումը ենթակա էր հետաձգման ՀՖՖ Նախագահի լիազորության կիրառմամբ.

Որպես առանձին լիազորություն դա սահմանված չէ, սակայն ՀՖՖ Կանոնադրության Դ գլխում՝ 42-րդ կետ ժե ենթակետը (վրիպակի պատճառով Կանոնադրության մեջ կա 2 ժե ենթակետ, խոսքը գնում է երկրորդ ենթակետի մասին) սահմանում է, որ ՀՖՖ նախագահը.

«...որոշումներ է ընդունում բոլոր այն հարցերով, որոնք Ժողովի իրավասության շրջանակներում չեն կամ որոնք օրենքով կամ սույն Կանոնադրությամբ վերապահված չեն ՀՖՖ-ի մյուս մարմինների իրավասությանը»:

Այս լիազորությունը վերապահված չէ այլ մարմինների, ուստի դա, որպես հայեցողական լիազորություն սահմանված է ՀՖՖ նախագահի համար, և ակումբը գտնում է, որ նման պայմաններում հաշվի առնելով գործող փաստերը, օբյեկտիվ գործոնները, որոնք կախված չէին Լոռի ֆուտբոլային ակումբից, ՀՖՖ նախագահը պետք է համապատասխան որոշում կայացներ, քանի որ և՛ մարդկային, և՛ իրավական տեսանկյունից ակումբն իրեն դիմել է: Այդուհանդերձ, որոշումը չի կայացվել:

2) Նմանատիպ փաստական հանգամանքներում ՀՖՖ նախագահի կողմից այլ որոշում է կայացվել.

Այսինքն, այդ լիազորությունը եղել է ՀՖՖ նախագահի իրավասության շրջանակում, որը ևս մեկ անգամ փաստում է ակումբի մեկնաբանությունը:

3) Ընդհանուր սկզբունքներ.

Դրանք սահմանված են և՛ ՀՖՖ կանոնադրությամբ, և՛ ՖԻՖԱ, և՛ ՈՒԵՖԱ համապատասխան իրավական ակտերով, որոնք համարվում են իրավունքի աղբյուրներ այս հարաբերությունների համար:

Մասնավորապես, դրանք կարգապահական պատասխանատվության սկզբունքները.

«Հոդված 5. Կարգապահական պատասխանատվության սկզբունքները.

5.01 Ֆուտբոլի բնագավառում ներգրավված բոլոր անձինք պետք է առաջնորդվեն ֆուտբոլային միասնության և հավատարմության, մրցակցին հարգելու, մարզական ոգուն համապատասխան անձնական կարգապահության և ազնվության սկզբունքներով:

5.02 Եթե սույն Կանոնակարգով որևէ այլ խախտման համար պատասխանատվություն և պատիժ չի սահմանված, ապա Կարգապահական կոմիտեի կողմից՝ Կարգապահական պատասխանատվություն ենթարկելու որոշումը կայացվում է

իրավունքի, արդարության և ազնվության սկզբունքների հիման վրա և պարտադիր է կատարման:»¹

«11 Offensive behaviour and violations of the principles of fair play:

1. Associations and clubs, as well as their players, officials and any other member and/or person carrying out a function on their behalf, must respect the Laws of the Game, as well as the FIFA Statutes and FIFA's regulations, directives, guidelines, circulars and decisions, and comply with the principles of fair play, loyalty and integrity.»²

Ազնվությունը և արդարությունը ոչ միայն իրավական կատեգորիաներ են, այլև բարոյական, որոնք ենթադրում են հավասար պայմանների ստեղծում նման հանգամանքների պարագայում:

4) Ինչ վերաբերում է կորոնավիրուսով պայմանավորված խաղալու ոչ իրավաչափ լինելուն.

Լոռի ֆուտբոլային ակումբը գտնում է, որ այս պարագայում էական է հասկանալ՝ ինչով է պայմանավորված եղել խաղին մասնակցելը և ոչ էական են համարում քննարկել այս պահին 11 հոգին կային, թե՛ չկային:

Գործում է ՖԻՖԱ-ի կողմից հաստատված շրջաբերական՝ <https://resources.fifa.com/image/upload/1735-covid-19-fifa-s-return-to-football.pdf?cloudid=iepkvqns9kek6ftlx8k>, որի annex C-ն սահմանում է քովիդի պայմաններում որոշակի կարգավորումներ, այդ թվում ֆուտբոլիստների, ակումբների կողմից խաղի անցկացման կարգավորում և այլն: Հատկանշական է, որ ՖԻՖԱ-ն այս անգամ չի սահմանել ընդհանուր կարգավորում և պարտադրում ֆեդերացիաներին հետևել դրանց, ինչպես անում է մնացած այլ դեպքերում, այլ հաշվի է առել սպեցիֆիկան և վերջին պարբերությամբ սահմանում է .

«As a minimum, the COVID-19 Medical Preparedness and Response Plan should comply with the measures stipulated herein. If the respective host country's, host association's or confederation's requirements are stricter or more exhaustive than some or all of the provisions established in this document, those requirements shall prevail, provided that the COVID-19 Medical Preparedness and Response Plan covers the constituent parts as suggested above.»

ՀՖՖ-ն ընդունել է այլ կարգավորում, որոնք տարբերվում են ՖԻՖԱ շրջաբերականից: Բայց պետք է հաշվի առնել մի կարևոր գործոն. ՖԻՖԱ-ն սահմանափակումը տալիս հղում է անում նաև պետությանը, քանի որ այստեղ կա հանրային շահ, որն

¹ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգ, հոդված 5

<https://www.ffa.am/uploaded/2018/%D5%80%D5%96%D5%96%20%D4%BF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D4%B7%D5%A9%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%20%D4%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%202020%20%D5%AD%D5%B4%D5%A2%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B4%D5%A2.pdf>

² FIFA Disciplinary code, article 11 <https://img.fifa.com/image/upload/hrj9obwjarigak8a58z4.pdf>

առողջությունն է: Եթե անգամ ՀՖՖ-ն որդեգրել է այլ կարգավորում, ակումբը հիմնվում է կառավարության որոշումների վրա:

Օգոստոսի 17-ի դրությամբ արդեն իսկ ընդունված է եղել կառավարության որոշման նոր փոփոխությունը: Մինչ օգոստոսի 12-ը ՀՀ ժամանել են այն ֆուտբոլիստները, որոնք պետք է մասնակցեին օգոստոսի 17-ին կայանալիք խաղին (կան ապացույցներ, անձնագրային տվյալներ): Այդ պահին գործող Կառավարության որոշումը (16 մարտի 2020, թիվ 298 որոշումը ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին) պարտադրում էր ինքնամեկուսացումը արտասահմանից ժամանողների համար: Այսինքն, ակումբն առաջնորդվել է ոչ թե ՀՖՖ կանոնակարգով, այլ Կառավարության որոշմամբ: Ըստ ակումբի, եթե իրենք մարզադաշտ հանեին 11 ֆուտբոլիստի, կխախտեին գործող իրավակարգավորումները, քանի որ չէին ապահովի ժամանած մարզիկների ինքնամեկուսացումը:

Ավելին, հետագայում պատշաճ եղանակով հաստատվել են Լոռի ֆուտբոլային ակումբի ֆուտբոլիստների մոտ կորոնավիրուսի դեպքերը, ինչը հանգեցրել է հաջորդ հանդիպման հետաձգմանը:

Բողոքարկման Կոմիտեն, քննարկելով ներկայացված փաստարկները, արձանագրում է.

1. Բողոքարկման Կոմիտեն որևէ իրավասություն չունի դիտարկելու և/կամ վերանայելու ՀՖՖ նախագահի կողմից իր լիազորության կիրառման կամ չկիրառման փաստը՝ բողոքում բերված հարցի շրջանակներում, ավելին՝ այդ լիազորության կիրառումը կամ չկիրառումը ՀՖՖ նախագահի հայեցողության ներքո է և այն այս դեպքում որպես բողոքարկման մաս չի կարող քննարկվել:
2. Բողոքարկման Կոմիտեն արձանագրում է, որ, իրոք Լոռի ֆուտբոլային ակումբի մոտ առկա է եղել խնդրահարույց իրավիճակ՝ կապված ֆուտբոլիստների հավաքագրման և հանդիպմանը հայտավորման հետ:
3. Միևնույն ժամանակ Բողոքարկման Կոմիտեն արձանագրում է, որ ՀՀ Պրեմիեր Լիգայի առաջին տուրի ժամանակացույցը հայտնի է եղել մասնակից բոլոր ակումբներին, ներառյալ Լոռի ֆուտբոլային ակումբին, և վերջինս գտնվում էր նույն պայմաններում, ինչպես և մյուս ակումբները՝ կապված թիմի համալրման և առաջին տուրին պատշաճ կարգով ներկայանալու հետ, իսկ թիմի ղեկավար կազմի որոշ ներկայացուցիչների հիվանդության փաստը չի կարող դիտարկվել որպես հարգելի պատճառ թիմի կազմի թերհամալրման հիմնավորման: Նման մոտեցումը պայմանավորված է նաև Լոռի ֆուտբոլային ակումբի կողմից հենց նշված ընդհանուր և արդարության սկզբունքներով:
4. Բողոքարկման Կոմիտեն նշում է, որ ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեն այս հարցով կիրառել է իրավաչափ մոտեցում և ղեկավարվել է գործող կանոնակարգերի խստիվ պահպանմամբ:
5. Ելնելով ստեղծված իրավիճակից Բողոքարկման Կոմիտեն գտնում է, որ ի լրումն տեխնիկական պարտության, տուգանքի կիրառումը այս դեպքում պետք է վերանայել:

Հատուկ կարծիք

Բողոքարկման Կոմիտեի անդամ Զոհրապ Եզանյանը, համաձայնելով Բողոքարկման Կոմիտեի կողմից նշված բոլոր փաստարկներին, նշեց, որ անկախ այն հանգամանքից, որ իրավական առումով ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի կողմից ընդունված որոշումն օրինաչափ է, սակայն, հաշվի առնելով ստեղծված իրավիճակն ու մարզական հավասար մրցակցության ապահովման պայմաններից ելնելով, պետք է առաջարկել ՀՖՖ-ին վերախաղարկել Ուրարտու – Լոռի ՀՀ Պրեմիեր Լիգայի առաջին տուրի հանդիպումը:

Բողոքի քննարկման արդյունքում Բողոքարկման Կոմիտեն ձայների մեծամասնությամբ /3 կողմ և 1 դեմ հարաբերակցությամբ/ որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 2

2.1 Լոռի ֆուտբոլային ակումբի կողմից ՀՖՖ Կարգապահական Կոմիտեի 2020 թվականի օգոստոսի 20-ի որոշման 5-րդ կետի դեմ բերված բողոքը մերժել՝ ուժի մեջ թողնելով ՀՖՖ Կարգապահական Կոմիտեի որոշման նշված կետը, բացառությամբ տուգանքի կիրառման, որի մասով այն փոփոխել և տուգանք չկիրառել:

2.2 Բողոքարկման Կոմիտեի որոշումը վերջնական է և բեկանման ենթակա չէ:

2.3 Սույն որոշումը կարող է բողոքարկվել Սպորտային Արբիտրաժային Դատարանին /CAS/՝ վերջինիս ընթացակարգով սահմանված կարգով:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 3

Օրակարգի 3-րդ հարցով իրենց դիրքորոշումը ներկայացրեցին Լոռի ֆուտբոլային ակումբի ներկայացուցիչները:

Ըստ Լոռի ֆուտբոլային ակումբի ներկայացուցիչների՝ ՀՀ Պրեմիեր Լիգայի 7-րդ տուրից հետաձգված և 2021 թվականի փետրվարի 24-ին անցկացված Լոռի – Ալաշկերտ հանդիպման ընթացքում Ալաշկերտ ֆուտբոլային ակումբի կողմից ֆուտբոլ խաղի կանոնների խախտման արդյունքում /փոխարինումների համար չորս դադարի օգտագործում՝ թույլատրվող երեքի փոխարեն/ Ալաշկերտ ֆուտբոլային ակումբին պետք է շնորհել տեխնիկական պարտություն 0:3 հաշվով, իսկ Լոռի ֆուտբոլային ակումբին՝ տեխնիկական հաղթանակ՝ 3:0 հաշվով:

Նման դիրքորոշման հիմնավորումները.

1. Հիմք պետք է ընդունել ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 7-րդ հոդվածը՝
«7.04 Կարգապահական և էթիկայի և Բողոքարկման Կոմիտեները իրավասություն ունեն պատասխանատվության ենթարկել ՀՖՖ հովանու ներքո անցկացվող բոլոր մրցումների հետ առնչվող ֆուտբոլային սուբյեկտներին ՀՖՖ կանոնադրության և Կանոնակարգերի որևէ դրույթի խախտման համար:»³

3

<https://www.ffa.am/uploaded/2018/%D5%80%D5%96%D5%96%20%D4%BF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%>

Այս պարագայում խախտումն արձանագրվում է, անկախ այն հանգամանքից՝ մրցավարն է մեղավոր, թե Ալաշկերտը, իսկ Լոռի ֆուտբոլային ակումբի կարծիքով առկա է նաև Ալաշկերտ ֆուտբոլային ակումբի մեղավորությունը, այնքանով որ կարող էին հրաժարվել ևս մեկ փոխարինում անելուց չորրորդ դադարի ընթացքում՝ անկախ մրցավարի գործողություններից:

2. ՖԻՖԱ-ի disciplinary code-ի 8-րդ դրույթը սահմանում է.
«8 Responsibility

1. Unless otherwise specified in this Code, infringements are punishable regardless of whether they have been committed deliberately or negligently.»

Այսպիսով, մեղքի առկայությունը չի կարևորվում կամ առանցքային դիտարկվում: Հստակ է, որ եղել է կամք իրավախախտման:

3. ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 20-րդ հոդվածով նախատեսվում է, որ
• սույն Կանոնակարգում չնշված պատճառ(ներ)ով խաղը չի մեկնարկել և/կամ չի շարունակվել:

«Շարունակել» ասելով հասկանում են ոչ միայն փաստացի չշարունակվելը, այլև խախտումներով շարունակվելը և նշված դրույթի կիրառմամբ Ալաշկերտ ֆուտբոլային ակումբին պետք է շնորհվի տեխնիկական պարտություն:

4. Նախադեպի առկայություն
Իտալիայի գավաթի խաղարկության Ռոմա – Սպեցիա 2021 թվականի հունվարի 19-ին կայացած հանդիպման արդյունքը չեղարկվել է և Ռոմա ֆուտբոլային ակումբին շնորհվել է տեխնիկական պարտությունը, քանի որ վերջինիս կողմից տեղի է ունեցել ֆուտբոլ խաղի կանոնների խախտում /5 փոխարինման տեղը Ռոման իրականացրել է 6 փոխարինում/:

Նշված խաղի կանոնները կիրառելի են բոլոր ֆեդերացիաների նկատմամբ՝ ներառյալ ՀՖՖ և վերջինիս հովանու ներքո անցկացվող առաջնությունների:

Կիրառվող կանոն՝ IFAB /ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային խորհուրդ/ կողմից ընդունված ՖԻՖԱ-ի Խաղի կանոնների Հոդված 3-ում փոփոխություններ, որոնցով կանոնակարգվում է կորոնավիրուսային համաճարակով պայմանավորված թույլատրվող փոխարինումների քանակը՝ 5, ինչպես նաև խաղի դադարների քանակը, որոնց ընթացքում կարելի է իրականացնել խաղացողների փոփոխություն՝ 3 /առանց հաշվարկելու ընդմիջման ժամանակը/:

[D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D6%87%20%D4%B7%D5%A9%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%20%D4%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%202020%20%D5%AD%D5%B4%D5%A2%D5%A1%D5%A3%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B4%D5%A2.pdf](#)

Բողոքարկման Կոմիտեն, դիտարկելով Լոռի ֆուտբոլային ակումբի կողմից ներկայացված փաստարկները, ինչպես նաև այդ դրվագի տեսագրությունը, գտնում է, որ.

1. Տեղի է ունեցել մրցավարական սխալ, որի արդյունքում Ալաշկերտ ֆուտբոլային ակումբը 3-րդ դադարի ընթացքում չի կարողացել իրականացնել նախապես հայտավորված 2 ֆուտբոլիստների փոխարինում.
2. Իտալիայի գավաթի խաղարկության Ռոմա – Սպեցիա նախադեպը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ Ռոմայի կողմից իրականացվել է ֆուտբոլ խաղի կանոնների խախտում՝ ավել փոխարինում, ինչը թույլատրված չէ կանոններով, որի մասին և փաստել է խաղի պաշտոնական փաստաթղթերի ուսումնասիրությունը և կիրառել է նշված պատժամիջոցը.
3. Լոռի ֆուտբոլային ակումբի կողմից ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 20-րդ հոդվածով տրված կարգավորման մեջբերումը կիրառելի չէ այս դեպքում, ավելին գործող կանոնակարգում առկա չէ որևէ կարգավորում առ այն, որ փոխարինումների դադարների քանակի խախտման դեպքում որպես պատժամիջոց պետք է կիրառվի տեխնիկական պարտություն.
4. Մրցավարական սխալների մասով Բողոքարկման Կոմիտեն որևէ իրավասություն չունի, քանի որ.
 - Ա. Համաձայն ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 26.01 հոդվածի՝ մրցավարի կողմից խաղադաշտում կայացված որոշումները վերջնական են և ենթակա չեն վերանայման ՀՖՖ Կարգապահական կոմիտեի կողմից: Սա նաև բխում է ՈՒԵՖԱ-ի Կարգապահական Կանոններից /Disciplinary Regulations, Article 9, point 1, համաձայն որի Decisions taken by the referee on the field of play are final and may not be reviewed by the UEFA disciplinary bodies/.
 - Բ. Համաձայն ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգի 8.05 հոդվածի՝ Բողոքարկման Կոմիտեն իրավասու է լսել այն բոլոր բողոքարկումները, որոնք ընդունվել են Կարգապահական և էթիկայի Կոմիտեի կողմից և մասնավորապես որոշում ընդունել այն դեպքերում, երբ ներկայացված որոշումն ընդունվել է միանձնյա Կարգապահական և էթիկայի Կոմիտեի նախագահի կողմից:
5. Այսպիսով, Բողոքարկման Կոմիտեն գտնում է, տվյալ դեպքում առկա է մրցավարական սխալ, ինչը հանգեցրել է ֆուտբոլ խաղի կանոնների առերևույթ խախտմանը: Ավելին, նման խախտումը չի կարող միանշանակ հանգեցնել տեխնիկական պարտության շնորհմանը, քանի որ նման կարգավորում առկա չէ ՀՖՖ կարգապահական և էթիկայի կանոնակարգում:
6. IFAB /ֆուտբոլային ասոցիացիաների միջազգային խորհուրդ/ կողմից ընդունված ՖԻՖԱ-ի Խաղի կանոնների Հոդված 3-ում փոփոխությունների մասով նման պատժամիջոց սահմանված չէ:

Բողոքարկման Կոմիտեն գտնում է, որ ՀՖՖ կանոնակարգերում պետք է համապատասխան կարգավորումներ նախատեսել՝ տարատեսակ մեկնաբանություններից խուսափելու համար:

Բողոքի քննարկման արդյունքում Բողոքարկման Կոմիտեն միաձայն որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 3

- 3.1 Լոռի ֆուտբոլային ակումբի կողմից 2021 թվականի մարտի 2-ին ներկայացված բողոքը ենթակա չէ քննարկման, քանի որ այն վերապահված չէ Բողոքարկման Կոմիտեի իրավասությանն ու վերաբերում է մրցավարական սխալին:
- 3.2 Բողոքարկման Կոմիտեի որոշումը վերջնական է և բեկանման ենթակա չէ:
- 3.3 Սույն որոշումը կարող է բողոքարկվել Սպորտային Արբիտրաժային Դատարանին /CAS/՝ վերջինիս ընթացակարգով սահմանված կարգով:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 4

Օրակարգի 4-րդ հարցով իր դիրքորոշումը ներկայացրեց Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբի ներկայացուցիչ Պողոս Գալստյանը, ով նշեց իր անհամաձայնությունը ՀՖՖ Կարգապահական Կոմիտեի 2020 թվականի օգոստոսի 27-ի որոշման 2-րդ կետի հետ, որով իրեն տրվել է նկատողություն, իսկ ակումբի նկատմամբ կիրառվել է տուգանք՝ 500 000 ՀՀ դրամի չափով:

Նա մասնավորապես նշեց, որ ֆուտբոլային խաղի ընթացքում հնարավոր են էմոցիոնալ պահեր, որոշ դրվագներում նույնիսկ որոշակի կանոններից դուրս եկող, սակայն իր համար անհասկանալի է ՀՖՖ խաղի պատվիրակի կողմից իրականացված գործողությունները և տրված մեկնաբանությունները: Ավելին, ՀՖՖ-ն իր ներկայացուցիչների միջոցով պետք է միատեսակ մոտեցում կիրառի բոլորի նկատմամբ, քանի որ նման դեպքեր շատ են լինում:

Բողոքարկման Կոմիտեն, դիտարկելով ներկայացված դիրքորոշումը, գտնում է, որ.

1. Նշված դրվագի մասով ՀՖՖ պատվիրակի գործողությունները օրինաչափ են, իսկ էմոցիոնալ վարքագիծը չպետք է լինի հանրության համար ընդունելի կանոններից դուրս:
2. Նշված դեպքից հետո, Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբի գլխավոր տնօրենի կողմից որևէ նման վարքագիծ չի դրսևորվել:
3. Դիրքորոշումը ձևավորելիս, կարևոր է, որ համապատասխան եզրակացություններն արդեն իսկ արվել են և կիրառվել:

Բողոքի քննարկման արդյունքում Բողոքարկման Կոմիտեն միաձայն որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 4

- 4.1 Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբի կողմից ՀՖՖ Կարգապահական Կոմիտեի 2020 թվականի օգոստոսի 27-ի որոշման 2-րդ կետի դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ գլխավոր տնօրեն Պողոս Գալստյանին տրված զգուշացումը հանել, իսկ Արարատ-Արմենիա ֆուտբոլային ակումբի նկատմամբ կիրառված տուգանքը սահմանել 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:
- 4.2 Բողոքարկման Կոմիտեի որոշումը վերջնական է և բեկանման ենթակա չէ:

4.3 Սույն որոշումը կարող է բողոքարկվել Սպորտային Արբիտրաժային Դատարանին /CAS/՝ վերջինիս ընթացակարգով սահմանված կարգով:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 5

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացվեց Շիրակ ֆուտբոլային ակումբի ներկայացուցչի կողմից՝ բողոքարկելով ՀՖՖ Կարգապահական Կոմիտեի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշման 2-րդ կետը, որով Շիրակ-2 ֆուտբոլային ակումբին շնորհվել է տեխնիկական պարտություն 0:3 հաշվով 2020 թվականի օգոստոսի 29-ին նշանակված Սևան ֆուտբոլային ակումբի հետ հանդիպմանը չներկայանալու պատճառով, իսկ ակումբը տուգանվել է 200 000 /երկու հարյուր հազար/ ՀՀ դրամ չափով:

Ըստ Շիրակ ֆուտբոլային ակումբի ներկայացուցչի.

1. Նշված հանդիպման օրը թիմում առկա են եղել կորոնավիրուսի ախտանիշներով որոշ ֆուտբոլիստներ, ինչի մասին ակումբը պատշաճ տեղեկացրել է ՀՖՖ-ին էլեկտրոնային նամակի միջոցով.
2. Համաճարակային կանոններով պայմանվորված՝ թիմը չէր կարող մեկնել հանդիպմանը.
3. Հետագայում թիմի ֆուտբոլիստների մոտ հայտնաբերվել է կորոնավիրուսի 10 դեպք, և սա հաշվի չի առնվել ՀՖՖ Կարգապահական Կոմիտեի կողմից:

Բողոքարկման Կոմիտեն քննարկելով ներկայացված փաստարկները, արձանագրում է.

1. Թեև հանդիպման օրը Շիրակ -2 ֆուտբոլային ակումբի մոտ առկա է եղել խնդրահարույց իրավիճակ՝ կապված ֆուտբոլիստների մոտ կորոնավիրուսի ախտանիշների առկայության հետ, ինչպես նաև ակումբի ֆիզիոթերապևտի և ՀՀ Մ17 տարիքային հավաքականից վերադարձած ֆուտբոլիստի մոտ հայտնաբերվել է կորոնավիրուսային հիվանդություն, սակայն այդ օրվա դրությամբ Շիրակ – 2 ֆուտբոլային ակումբի կողմից նշված 2020/2021 մրցաշրջանի Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման կորոնավիրուսի կանխարգելման քայլերի Ուղեցույցի Հոդված 4-ի 5-րդ կետի կիրառման տեսանկյունից նշված հիվանդության հաստատված դեպքերի քանակ առկա չէ հանդիպման անցկացման օրվա դրությամբ, իսկ Ուղեցույցի պահանջների կիրառման առումով պետք է ուղղորդվել համապատասխան կարգավորումներով և պահանջներով՝ դրանց պահպանմամբ:
2. Բողոքարկման Կոմիտեն նշում է, որ ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեն այս հարցով կիրառել է իրավաչափ մոտեցում և ղեկավարվել է գործող կանոնակարգերի խստիվ պահպանմամբ:
3. Սակայն, հաշվի առնելով բողոքում բերված հանգամանքները, Բողոքարկման Կոմիտեն գտնում է, որ ի լրումն տեխնիկական պարտության տուգանքի կիրառումը այս դեպքում պետք է վերանայել:

Բողոքի քննարկման արդյունքում Բողոքարկման Կոմիտեին միաձայն որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 5

- 5.1 Շիրակ-2 ֆուտբոլային ակումբի կողմից ՀՖՖ Կարգապահական Կոմիտեի 2020 թվականի սեպտեմբերի 3-ի որոշման 3-րդ կետի դեմ բերված բողոքը մերժել՝ ուժի մեջ թողնելով ՀՖՖ Կարգապահական Կոմիտեի որոշման նշված կետը, բացառությամբ տուգանքի կիրառման, որի մասով այն փոփոխել և տուգանք չկիրառել:
- 5.2 Բողոքարկման Կոմիտեի որոշումը վերջնական է և բեկանման ենթակա չէ:
- 5.3 Սույն որոշումը կարող է բողոքարկվել Սպորտային Արբիտրաժային Դատարանին /CAS/՝ վերջինիս ընթացակարգով սահմանված կարգով:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՀԱՐՑ 6

Օրակարգի 6-րդ հարցի ներքո իրականացվեց Բողոքարկման Կոմիտեի նիստի ամփոփում, ընդգծվեց անհրաժեշտությունն այսուհետ Բողոքարկման Կոմիտեի նիստերն անցկացնել ճիշտ ժամանակին, բաց նիստերի միջոցով՝ բողոք բերած անձանց մասնակցությամբ:

ՈՐՈՇՈՒՄ 6

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ որևէ որոշում չկայացվեց, քանի որ այն կրում էր ընթացակարգային բնույթ:

Նիստը վարող՝	Դավիթ Սարգսյան
Անդամներ՝	Զոհրապ Եգանյան
	Արամ Արոյան
	Կարեն Ասատուրյան